

ՄԵՂՐԱԲՅԱՆ Ա. Ա.

ԲՈՌՈՒՇՆԱՅԻ (Ervum Vicia) ՊՍԱՐԱՐԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ
ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՐՈՒԼԵՆՈՒԹՅՈՒՆԸ

(II հաղորդում)

Վիրուլենտության և ակտիվության վերաբերյալ տարբեր հեղինակներ հայտնել են տարբեր կարծիքներ: Վիրուլենտությունը Հիլտները և Շտյորմերը (1) համարում էին բույսի արմատի հյուսվածքի մեջ բակտերիաների թափանցելու և այնտեղ բազմանալու հատկությունը: Այլ բնորոշում է տալիս Ջյուլտինգը (2). ըստ նրա, վիրուլենտությունն ուժեղ զարգացող բակտերիաների կողմից ազոտային նյութեր արտադրելու հատկությունն է, որը տեղի ունի նյութերի նորմալ փոխանակության զեպքում:

Վունդիկը (3) գտնում է, որ վիրուլենտությունը բակտերիաների ընդունակությունն է բույսի արմատի մեջ ներս թափանցելու ու բազմանալով լայնտեղ՝ նրան պատճառել օգուտ կամ վնաս: Պալարաբակտերիաների և բույսերի փոխհարաբերության հարցը, չնայած իր թեորետիկ և պրակտիկ նշանակության, մինչև այժմ էլ դեռ լրիվ չի լուսաբանված: Գիտնականների մեծ մասն այնուամենայնիվ այն կարծիքին է, որ թիթեռնածաղկավոր բույսերի և պալարաբակտերիաների միջև գոյություն ունի սիմբիոտիկ կապ:

Պալարաբակտերիաներն ուսումնասիրելով Իեյերինկը (4) գտնում է, որ բույսի և պալարաբակտերիաների միջև գոյություն ունի հավասարակշռություն:

Ըստ այդ հեղինակի, եթե՛ բուսական քլորոֆիլ իր զարգացման ընթացքում օգտվում է մի ուրիշ օրգանիզմից, ապա նման պայմաններում նրանց միջև պետք է որ գոյություն ունենա նուրբ հավասարակշռություն, որը, սակայն, երբեմն խախտվում է ակտիվ բակտերիաների ուժեղ աճելու պատճառով, ստացվում է բակտերիաների զերակշռություն, որը և բացասաբար է ազդում բույսի աճման վրա:

Ֆրանկը նույնպես բույսի և պալարաբազկտերիտաների միջև գտնուած է սիմբիոտիկ կապ: Նա ենթադրում է, որ բազկտերիտաները բույսից ստանում են անխաջրատներ և ասպարազին, իսկ իրենք բույսին տալիս են ասսիմիլիացիայի ենթարկված՝ ազոտի մի մասը: Ֆրանկն առաջինը հայտնեց այն կարծիքը, թե պալարաբազկտերիտաները կարող են լինել տարբեր վիրուլենտութեան:

Հետագայում Հիլտնեբը և Շտյոբմբերը (1) մի շարք էքսպերիմենտալ փորձերով հաստատեցին այդ: Ըստ այդ հեղինակների, պալարաբազկտերիտաների որոշ բասսաներն ուժեղ կերպով վարակում են բույսերը, իսկ նրանցից մի մասն էլ՝ բոլորովին չեն վարակում և բույսերը բազկտերիտաների նկատմամբ մնում են իմուն: Այստեղից էլ առաջանում է իմունիտետի մասին եղած հասկացողութունը և դրա վերաբերյալ Հիլտնեբի թեորիան, ըստ որի, ցածր կամ հավասար վիրուլենտութուն ունեցող բազկտերիտաների նկատմամբ՝ ակտիվ պալարները բույսին տալիս են իմունիտետ: Իսկ այդ պայմաններում միայն բարձր վիրուլենտութուն ունեցող բազկտերիտաները կարող են ներս թափանցել արմատների մեջ: Այդ թեորիան նա հիմնավորում է՝ նախ պալարների դասավորութեամբ, ըստ որի ոչ թե ամբողջ արմատն է վարակվում պալարներով, այլ նրա միայն ծերացած մասերը, հատկապես գլխավոր արմատի վերին մասը: Ավելի երիտասարդ արմատների վրա պալարներ կամ բոլորովին չեն առաջանում և կամ առաջացած պալարները շատ մանր են լինում: Պալարների այդ դասավորութունը նա բացատրում է նրանով, որ սերմի ծլման ժամանակ գլխավոր արմատն ավելի շուտ է վարակվում, քան արմատի մնացած մասերը. և դրա հետևանքով էլ նրա վրա պալարներն ավելի շուտ են առաջանում, որոնք և բույսին իմունիտետ են հաղորդում:

Մյուս կողմից, ըստ այս հեղինակի, բույսերի մեջ առաջանում են ինչ որ պաշտպանող նյութեր, որոնք և ցածր վիրուլենտութուն ունեցող բազկտերիտաներին խանգարում են նրա մեջ ներս թափանցելու:

Պալարաբազկտերիտաների մոտ ակտիվ և ոչ-ակտիվ շտամների գոյութեան մասին շատ հեղինակների մոտ է նշված, օրինակ՝ Լ. Մ. Դորոսինսկու (5), Դ. Ն. Իունհամի և Ի. Լ. Բալալովի (6), Դորոտեյա Գեգնեյի (7), Ի. Լ. Բարոտնովայի (8), Իգրայիսկու և Արտեմեվայի (9) և ուրիշների: Այնուհետև, ըստ այդ հեղինակների, ոչ-ակտիվ շտամով վարակելու դեպքում՝ ստացվում են մեծ մասամբ մանր, դեղին գույնի պալարներ, որոնք ցրված են լի-

Նուա՛մ ամբողջ արմատային սիստեմի վրա: Այդպիսի պալարները ոչ միայն չեն նպաստում բույսի մեջ ազոտի կուտակմանը, այլև տիրոջ համար հանդիսանում են որպես պարագիտներ: Մինչդեռ ակտիվ շտամով վարակելիս, ստացվում են խոշոր վարդագույն պալարներ, որոնք մեծ մասամբ գտնվում են արմատի վերին մասում: Այդպիսի պալարները, ինչպես Լյոնիսն է ասում, նպաստում են բույսի մեջ ազոտի կուտակմանը և դրանով իսկ նպաստում նրա զարգացմանը:

Այնուհետև Դորոսիսկիէն (5) նշում է նաև այն մասին, որ հողում հաճախ գտնվում են պալարաբակտերիաների ոչ ակտիվ շտամներ, որոնք ներս թափանցելով բույսի արմատի մեջ և բազմանալով պալարներում ի հայիվ բույսի՝ պարագիտ կյանք են վարում, խանգարելով այլ շտամների մուտքն այնտեղ. այսպիսով՝ ակտիվ և ոչ-ակտիվ շտամների միջև ստեղծվում է պայքար:

Նույն բանն են նկատել Բոլզվիներ և Դունհամը (6), ըստ որոնց կրկնակի վարակման դեպքում բույսերը ցույց են տալիս խիստ զիմադրութիւն: Պաուլ Հրենբերգը (10), Ի. Լ. Րաբոտոնովան (8), Ն. Ա. Կրասիլնիկովը (11), Իզրայիլսկիին ու Արտեմեվան (9) և ուրիշները գտնում են, որ պալարաբակտերիաների վերուլինտութիւնը կարելի է բարձրացնել բույսի՝ տիրոջ միջոցով անցկացնելով:

Հիւտները և Շոյորմերը (1) գտնում են, որ պասսաժի հետևանքով բակտերիաների վերուլինտութիւնն իրոք մեծանում է, սակայն երկու-երեք անգամից ավելի կրկնելու դեպքում բակտերիաները վեր են ածվում իսկական պարագիտների, որի հետևանքով իջնում է բույսի բերքատվութիւնը: Վունշիկը (3) նույնպես գտնում է, որ մի քանի պասսաժից հետո բարձրանում է բույսի բերքատվութիւնը: Այս բանը նա բացատրում է դարձյալ բակտերիաների ակտիվութիւնամբ, իսկ Լիթե դա կրկնվում է բազմաթիվ անգամ, այդ ժամանակ պալարներն ընդունում են թաթանման ձև ու թուլացնում ազոտ կապելու ունակութիւնը: Վերջինս բացատրվում է նրանով, որ այս դեպքում տեղի է ունենում բակտերիաների ուժեղ աճ, բույսի և պալարաբակտերիաների միջև ստեղծվում է անհավասարակշռութիւն, ընդ որում բույսերը հնարավորութիւն չեն ունենում վերամշակել ազոտային նյութերի այն քանակութիւնը, որը նրանց տալիս են բակտերիաները, մյուս կողմից բույսը չի կարողանում բակտերիա-

ներին հասցնել նրանց համար անհրաժեշտ է ներգծել մատերիալը, որի հետևանքով և իջնում է բույսի բերքատվութունը: Վունը ինչպես իր փորձերից այն հետևութունն է անում, որ բակտերիաների և բույսերի միջև եղած կապն ունի ֆիզիոլոգիական բնույթ:

Հավասարակշռութունը բույսերի և բակտերիաների միջև այնքան էլ պարզ չի և չի սահմանափակվում միայն ֆիզիոլոգիական կապով—ասում է Իգրայիսկին (9):

Ըստ նրա՝ այդ հավասարակշռության մեջ դեր են խաղում բակտերիոֆագը և բակտերիաների դիսսոցիացիան:

Նա իր փորձերից ելնելով գտնում է, որ բակտերիոֆագով վարակված բույսերի վրա պալարներ բավական քիչ են ստացվում. բացի այդ, պալարների մեջ նկատվում են նաև բակտերիաների ձևափոխութուններ: Այսպիսով, ըստ նրա, կապը նրանց միջև ոչ միայն լոկ ֆիզիոլոգիական է, այլև բիոլոգիական:

Թվարկելով վիրուլենտության վերաբերյալ եղած բոլոր հիշյալ կարծիքները, պետք է ասել, որ ներկայիս հասկացողությամբ, ինչպես Միշուստինն է (12) բնորոշում, վիրուլենտությունն ընդունվում է որպես պալարներ առաջացնելու հատկություն, իսկ ակտիվությունն ասելով, պետք է հասկանալ պալարաբակտերիաների ազոտ կապիլու ընդունակությունը:

Ոմանց կարծիքով բակտերիաները կարող են լինել վիրուլենտ, այսինքն՝ պալարներ առաջացնելու ընդունակ, բայց ոչ՝ ակտիվ՝ ազոտ կապիլու անընդունակ: Սակայն վերջին ժամանակվա հետազոտողներից ոմանք գտնում են, որ վիրուլենտ շտամները միաժամանակ հանդիսանում են նաև ակտիվ շտամներ: Մեր փորձերը նույնպես խոսում են նաև ակտիվ շտամները միևնույն ժամանակ հանդիսանում են և ակտիվ շտամներ: Բազումովսկայան (13) գտնում է, որ վիրուլենտության և ակտիվության հետ միասին մեծ դեր են խաղում նաև բույսի սորտային հատկությունները, նույնը նկատվում է նաև Ա. Պ. Պետրոսյանի (14)՝ կոբնզանի վերաբերյալ կատարած հետազոտություններում:

Մեր կողմից մեկուսացված քուռչնայի հետազոտվող շտամների վիրուլենտությունը լաբորատոր պայմաններում որոշելու համար՝ հետազոտվող շտամների մորֆոլոգիական հատկանիշներն ուսումնասիրելու հետ մեկտեղ, այդ շտամները փորձարկվել են նաև բույսերի վրա, որի համար ամենանպատեղահարմար մեթոդը, օր

առաջադրել է կազմակերպել—համարվում է ստերիլ ազարի և ժելատինի միջավայրում աճեցրած բույսերի մեթոդը:

Այս մեթոդն ունի մի շարք առավելութիւններ.

1. այն, որ ստերիլ պայմանները կարելի է շարունակել մինչև փորձի վերջը,

2. որ հնարավոր է դիտել արմատի ամեն մի փոփոխութիւնը. մի հանգամանք, որը հնարավոր չէ ավագային և հողային պայմաններում,

3. որ փորձը տևում է 1—1½ ամիս, հնարավոր դարձնելով կարճ ժամանակամիջոցում որոշելու շտամների ակտիվութիւնը:

Շտամների վերուկնտութիւնը և ակտիվութիւնը բնական պայմաններում ստուգելու համար, դրվել են նաև վեգետացիոն և դաշտային փորձեր: Բոլոր մեթոդների ղեկքում էլ,—լաբորատոր, վեգետացիոն և դաշտային,—եղել են տարբեր սորտերից մեկուսացված շտամներ, որոնք փորձարկվել են բույսի միևնույն սորտի վրա:

Վեգետացիոն փորձերը դրվել են ստերիլ հողի վրա՝ հետևյալ ձևով. 2,5 կիլոգրամ հողը լցվել է ապակյա անոթների մեջ, խոնավացվել է հողի ջրունակութեան 60%—ի չափով և 2 ատմոսֆեր ճնշման տակ՝ երկու ժամ ենթարկվել է ստերիլիզացիայի: Ցանքը կատարվել է խտասհանված սերմերով (սուլիմայով և սպիրտով) և վարակվել 4—5 օրյա կուլտուրայի համաչափ սուսպենզիայով, թողնելով սերմերը համապատասխան շտամի սուսպենզիայի ազդեցութեան տակ մոտ 20—30 րոպե:

Փորձը դրվել է 3 կրկնողութեամբ № 1, № 4, № 6 կոտայքի շրջանի Բաշ-գյուղի, Ախտայի շրջանի Ալափարս գյուղի, Սպիտակի շրջանի Զիզդաթալ գյուղի № 2 և Սպիտակի շրջանի Գոյ-գյուլմուշ գյուղի շտամների հետ և տեղի է մոտ երկու ամիս: Փորձի վերջում չափվել է բույսերի բարձրութիւնը, հաշվի են առնվել բերքի տվյալները և ազոտի որոշման համար բույսի թի վեգետատիվ մասերից և թի արմատներից վերցվել են նմուշներ: Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ Երևանի կլիմայական պայմաններում քուլտուրայի բույսերը վեգետացիոն անոթներում իրենց լավ չէին զգում: Այդ բանը նկատվել է փորձը երեք անգամ կրկնվելու ղեկքում էլ: Զնայած դրան, այնուամենայնիվ վեգետացիոն փորձերի միջոցով երևան հանվեցին քուլտուրայի

պալարաբակտերիաների ակտիվ շտամներ, որոնք հետագայում ճշտվեցին նաև դաշտային փորձերում:

Ըստ Սեյցի, Բուլուիինի, Ֆրիտի, Լյոնիսի, Բայտի և ուրիշների, բակտերիաները թիթեռնածաղկավոր բույսի վրա կարող են ունենալ տարբեր ազդեցություն. նույնը նկատվում է նաև մեր փորձերում:

№ 1 աղյուսակը ցույց է տալիս, որ տարբեր սորտերից մեկուսացված շտամները միևնույն սորտի բույսի վրա ունեն տարբեր ազդեցություն:

Ինչպես № 1 աղյուսակից տեսնում ենք, ակտիվության տեսակետից առաջին տեղը զբաղում է Vulgaris այլատեսակից մեկուսացրած № 4 շտամը, որը տալիս է բերքի հավելում 150 տոկոս:

Երկրորդ տեղն իր ակտիվությամբ զբաղում է Բաշ-գյուղինը, որը բերքի հավելում տալիս է 92,2%, երրորդ տեղը՝ № 6 շտամը, տալով 73% բերքի հավելում, չորրորդ տեղը՝ Աշտարակի շտամը և այլն:

Պատճառային պալարաբակտերիաների ազդեցությունը բերքի բարձրացման վրա՝ վեգետացիոն փորձերում.

Աղյուսակ № 1

| Շտամները | Բույսերի թիվը | Բույսերի քանակությունը | 6 բույսի խոտով բաշը | Բերքի հավելում տոկոսով |
|--------------|------------------|---------------------------|---------------------------|------------------------------|
| Կանարու | 5 | 17 | 2,60 | — |
| 1 | » | 25 | 2,80 | 7,6 |
| 4 | » | 40 | 6,50 | 150 |
| 6 | » | 29 | 4,50 | 73 |
| Բաշ-գյուղ | » | 26 | 5,0 | 92,2 |
| Աշտարակ | » | 19 | 3,50 | 34,6 |
| Աշտարակ | » | 23 | 4,0 | 53,8 |
| Զիզզամալ № 3 | » | 27 | 3,0 | 15,3 |
| Պայգյուղուշ | » | 25 | 3,50 | 34,6 |

Հետևապես, կարելի է եզրակացնել, որ հետազոտվող շտամների մեջ ամենից ակտիվը համադիսանում են № 4, Բաշ-գյուղի և № 6 շտամները:

Մի շարք հեղինակներ՝ Օ. Ի. Շվեցովան (15), Լ. Մ. Դորա-սինսկին (5), Ա. Ա. Օբրազցովան, Ա. Բ. Մինենիկովը, Ե. Յու-

Քեվյակինան, Գ. Մ. Գոյանդը և Ա. Ի. Կրասիլնիկովան (16), Միշուստինը և Բերնարդը (17), Ն. Կ. Փանոսյանը (18), Գ. Ս. Հարիսոնը և Բ. Բարրովը (19) և ուրիշներն իրենց աշխատանքներում նշում են այն մասին, որ ակտիվ շտամներով վարակված բույսերը մյուսների համեմատութեամբ, տալիս են ավելի բարձր և հզոր անեցողութուն, ինչպես ցույց են տալիս № 1 աղյուսակի օվյալները: Նույնը նկատվում է նաև մեր փորձերում:

Պարարակտերիաններն ուշագրավ են նաև այն տեսակետից, որ նրանք թիթեանածաղկավոր բույսերի սննդաուլթյան գործում մեծ դեր են խաղում: Սակայն նրանց կիրառումը հոգում, թիթեանածաղկավորների ցանքսի դեպքում ամեն անգամ զրահան արդյունք չի տալիս:

Հողը որպես միջավայր նրանց զարգացման համար, խոշոր դեր է խաղում. պարարակտերիանները հողի մեջ ընկնում են պալարների քայքայման ժամանակ՝ սերմերի հետ, կամ թե՛ հատուկ վարակման միջոցով:

Պարարակտերիանները հոգում կարող են գտնել տարբեր պայմաններ: Հայտնի են այդ ուղղութեամբ Կավրովցեվայի կատարած աշխատանքները, որոնք պարզում են թե՛ որ հողերն են ավելի նպաստավոր պարարակտերիանների զարգացման համար: Ըստ այս հեղինակի, ինչպես և Բազումովսկայայի (23), Բերնարդի (21), Ն. Ա. Կրասիլնիկովի (22) և ուրիշների, պարարակտերիանների զարգացման վրա տարբեր հողեր տարբեր ազդեցություն ունեն: Նպաստավոր պայմանների դեպքում նրանք ավելի ակտիվ են դառնում և խոշոր դեր են խաղում բերքատվութեան բաժրացման գործում: Գրականութեան տվյալների մեծ մասը խոսում են այն մասին, որ կուլտուր-ոռոգվող հողամասերից մեկուսացված շտամներն ամենից ակտիվ են: Այդ ուղղութեամբ կատարված փորձերից հայտնի են Ն. Վ. Յաշնովայի (23), Վ. Բըլինկինայի (24), Մ. Գ. Գոլիկի (25), Գ. Վ. Լոպատինայի (26) և Բ. Ա. Մենկինայի (27) աշխատութիւնները, որոնք հաստատում են վերը հիշատակված դրույթը: Նույնը նկատվում է նաև մեր փորձերում, որ ամենից ակտիվ շտամները նրանք էին, որոնք մեկուսացվել էին կուլտուր-ոռոգվող հողամասերից: Հետաքրքիր է նաև Վ. Բերեսնյովայի (28)՝ խոնավութեան աստիճանի ազդեցությունն ազոտ ֆիքսող օրգանիզմների վրա աշխատութիւնը. ըստ այս հեղինակի, ազոտն ակտիվ է կապվում 25—50 0/0-ի խոնավութեան դեպքում:

Լաբորատոր և վեգետացիոն փորձերից բացի, շտամներէ ակտիվութիւնը ճշտելու համար, դրվել են նաև դաշտային փորձեր, թերթը հավաքվել է բույսերի ծաղկման շրջանում, բերքի հաշվառումը կատարվել է երկու կրկնողութիւնից ստացված սոլյաներից, փորձը տեւել է մոտ երկու ամիս Բույսի վեգետացիայի ընթացքում կատարվել են դիտողութիւններ՝ նրա անձան և դարգացման վերաբերյալ Ակտիվութիւն հետ մեկտեղ, որոշվեց է նաև շտամների վիրուլենտութիւնը: Այդ նպատակով յուրաքանչյուր մեկ կրկնութիւնից վերցվել է 5-ական բույս, և երկու կրկնութիւնից ստացված յուրաքանչյուր տասը բույսի վրա որոշվել է պալարների թիվը, քաշը, մեծութիւնը: Վերցվել են նաև նմուշներ բույսի վեգետատիվ մասերից, արմատներից և պալարներից՝ նրանց մեջ եղած ազոտը որոշելու համար:

Ինչպես վեգետացիոն, այնպես էլ դաշտային փորձերի տըվյալներից երևում է, որ հետազոտվող շտամների մեջ ամենից ակտիվ և վիրուլենտ հանդիսանում են № 4, № 6 և Բաշ-գյուղի շտամները:

Դրանցից № 4-ը դաշտային պայմաններում տալիս է բերքի հավելում 85,6%, № 6-ը 60,1% և Բաշ-գյուղի շտամը՝ 42,5%:

№ 2 աղյուսակի սոլյաները խոտում են նաև այն մասին,

Քուուսնայի պալարապահեսիաների ազդեցութիւնը բերատվոյան եւ պալարների զարգացման վրա

Աղյուսակ № 2

| Շտամներ | Բույսերի անկ- ցողութիւնը | Կանաչ մասան կիւլոգ. | Բերքի հավե- լումը տակո. | Պալարների թիվը 10 բույսի վրա | Տասը բույսերի պալարների քաշը | Պալարների մեծութիւնը |
|-------------|-----------------------------|------------------------|----------------------------|------------------------------------|------------------------------------|-------------------------|
| Կանաչու | միջակ | 2,925 | — | 52 | 0,8800 | մեծ |
| 1 | » | 2,655 | 14,1 | 356 | 0,4062 | մանր |
| 3 | » | 2,980 | 0,21 | 169 | 0,3100 | շատ մանր |
| 4 | շատ լավ | 4,317 | 85,6 | 182 | 1,0200 | մեծ |
| 6 | լավ | 3,784 | 60,1 | 352 | 1,2792 | միջակ |
| Ախաս | միջակ | 2,458 | 5,7 | 505 | 0,5262 | մանր |
| Աշտարակ | լավ | 2,849 | 22,5 | 3 0 | 0,7922 | միջակ և մանր |
| Գոյգյուղուշ | » | 2,681 | 15,3 | 106 | 0,3484 | մանր |
| Բաշ-գյուղ | » | 3,315 | 42,5 | 243 | 1,4900 | մեծ |
| Զիզլամալ 2 | » | 2,855 | 22,7 | 100 | 1,1300 | միջակ և մանր |

որ ակտիվ շտամները, համեմատած մյուս շտամների հետ, առաջացնում են քանակով պակաս, սակայն խոշոր պալարներ:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Մեր փորձերից ստացված տվյալները խոսում են այն մասին, որ վիրուլենտ շտամները միաժամանակ հանդիսանում են նաև ակտիվ շտամներ:

2. Տարբեր հողեր տարբեր ազդեցութիւն ունեն պալարաբակաբիաների զարգացման վրա կուլտուր-ուռովող հողերում. նրանք ավելի ակտիվ են դառնում և խոշոր դեր են խաղում բերքատվութեան բարձրացման գործում:

3. Ինչպես վեգետացիոն, այնպես և դաշտային փորձերի տվյալները գալիս են ասելու, որ հետազոտվող շտամների մեջ ամենից ակտիվ և վիրուլենտ հանդիսանում են № 4, № 6 և Բաշ-գյուղի շտամները:

4. Ակտիվ շտամներով վարակված բույսերը ապրիս են ավելի բարձր և հողը աճեցողութիւն, միաժամանակ բարձրացնելով բերքատվութիւնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hiltner I. und Stormer K.— Neue Untersuchungen über die Wurzelknöllchen der Leguminosen und deren Erreger. Biologische Abteilung für Landw. und Fortwirtschaft Bd III, Heft 3, 1903.

2. Suchting H.— Kritische Studien über die Knöllchenbakterien. Zent. Blatt für Bakt., II Ab., Bd 11, S. 377, 1904.

3. Wunschik H.— Erhöhung der wirksamkeit der knöllchenerreger unserer Smetterlingablutler durch passieren der wirtspflanzen. Zent. Blatt für Bakt. II Ab., Bd 64, S. 395, 1925.

4. Bejerinck, M. W.— Die Bacterien der Papilionaceen knöllchen. Bot. Zeitung, Jahrgang No 46, S. 725—735, No 47, S. 741—750, № 48, S. 757—771, № 49 S. 781, № 50, S. 797—804, 1888.

5. Доросинский, Л. М.— Активность клубеньковых бактерии клевера. Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том VIII, Вып. 7, 1939.

6. Dunham, D. H., and Baldwin, I. L.— Double infection of Leguminous plants with good and poor strains Rhizobia. Soil Science, Vol. XXXII, № 1, P. P. 235—248, 1931.

7. Kécney L. Dorothea— The Determination of effective strains of Rhizobium Trifolii Dangeard.

The root nodule bacteria of clover under bacteriologically controlled conditions. *Soil Science*, Vol. XXXIV, №1, P. 417, 1932.

8. Работнова, И. Л.— Новые исследования физиологии клубеньковых бактерий (обзор литературы).

Микробиология. Журнал общей сельскохозяйственной промышленной микробиологии. Том IX, вып. 5, 1940.

9. Израильский, И. П. и Артемова—Вирулентность и активность разных рас клубеньковых бактерий и иммунитет к ним у бобовых растений.

Микробиология почвы. Том II, Труды ВИУАА, вып. XV, 1937.

10. Ehrenberg Paul— Neue Feststellungen über die sog Virulenzsteigerung der Knöllchenbakterien unserer Leguminosen. *Zeitschrift für Pflanzenernährung und Düngung*, Bd 5 S. 104, 1925.

11. Красильников, Н. А.—Изменчивость клубеньковых бактерий. 1. Образование рас под влиянием бактериофага.

Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том X, Вып. 4, 1941.

12. Мишустин, Е. Н.—Почвенная микробиология в СССР. Химизация социалистического земледелия, № 11, 1937.

13. Разумовская, З. Г.—Образование клубеньков у различных сортов гороха.

Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том VI, Вып. 3, 1937.

14. Петросян, А. П.—Клубеньковые бактерии эспарцетов Армении. Труды республиканской научно-исследовательской станции полеводства НКЗ Арм. ССР, вып. 6, 1944.

15. Швецова, О. И.— Исследования над клубеньковыми бактериями III опыты по заражению клубеньковыми бактериями сои в среднем Поволжье.

Труды Всесоюзного Ин-та сельхозмикробиологии. Том. IV, вып. 3. 1931.

16. Образцова, А. А., Минеников, А. Р., Ревякина, Е. Ю., Голланд, Д. М. и Красильникова, А. И.— Микроэлементы, как фактор, повышающий эффективность нитрагина.

Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том VI, вып. 7, 1937.

17. Мишустин, Е. Н. и Бернад, В. В.—Нитрагин и его применение. Химизация социалистического земледелия № 11, 1938.

18. Паносян, А. К.— Применение нитрагена в Армянской ССР. Микробиология. Журнал общей сельскохозяйственной и промышленной микробиологии. Том. VIII, вып. 7, 1939.

19. Harrison, F. L., Borlow B.—The nodule Organism of Leguminosae its isolation cultivation identification and commercial application. *Zent. Blatt für Bact.* II Ab, Bd 19, S. 264—272, Bd 20, S. 441, 1907.

20. Разумова, З. Г.—Клубеньковые бактерии в почве. Труды Всесоюзного Ин-та Сельхозмикробиологии. Том V. 1933.

21. Бернарл, В. В.—Результаты применения нитрагина опытных и хозяйственных условиях. Труды ВИУАА, вып. XV. Микробиология Почвы, Том II, 1937.

22. Красильников, Н. А.—О влиянии микроорганизмов на рост растений. Обзор литературы.

Микробиология. Журнал общей сельхоз. и промышленной микробиологии. Том IX вып. 4, 1940.

23. Яшнова, Н. В.—Изучение эффективности естественных рас клубеньковых бактерий.

Микробиология. Журнал общей сельхоз. и промышленной микробиологии. Том VII вып. 9—10, 1938.

24. Былинкина, В.—Нитрификация и фиксация азота в почвах южного и Приазовского чернозема.

Труды Ин-та Сельхоз. Микробиологии. Том IV, 1930.

25. Голик, М. Г.—Влияние почв на активность клубеньковых бактерий.

Химизация социалистического земледелия. № 6, 1942.

26. Лопатина, Г. В.—Исследования над клубеньковыми бактериями. II Материалы по обследованию образования клубеньков у бобовых растений.

Труды Всесоюзного Ин-та сельхоз. микробиологии. Том IV, вып., 3, 1931.

27. Менкина, Р. А.—Исследования над клубеньковыми бактериями. IV влияние почвы и различных рас клубеньковых бактерий на сою. Труды Всесоюзного Ин-та сельхоз. микробиологии. Том IV, вып., 3, 1931.

28. Береснева В.—Влияние влажности на способность почвы к фиксации азота.

Труды Ин-та сельскохозяйственной микробиологии. Том IV, вып. 2, 1930.

МЕГРАБЯН А. А.

Вирулентность и активность клубеньковых бактерий французской чечевицы

Резюме

Изучая вирулентность и активность клубеньковых бактерий французской чечевицы, мы выяснили, что разные почвы имеют различное влияние на рост и развитие клубеньковых бактерий. Наши опыты показали, что клубеньковые бактерии, находящиеся в культурно-поливных поч-

вах, являются более активными и играют большую роль в деле повышения урожая. Вирулентность бактерий нами определялась тремя методами: лабораторным, вегетационным и полевым.

Наши данные по вегетационным и полевым опытам показали, что наиболее активными и вирулентными являются № 4, № 6 и Башкюховский штаммы клубеньковых бактерий.

Растения, зараженные активными штаммами, дали высокий и мощный рост, значительно повышая их урожай по сравнению с контролем.

В заключение можем сказать, что вирулентные штаммы клубеньковых бактерий французской чечевицы одновременно являются и активными.

Mehrabian A. A.

The Virulence and Activity of Nodule Bacteria of the French Lentils-*ervum vicia*

Summary

In studying the virulence and activity of nodule bacteria of the French lentils, we have shown that the various soils have different influence upon the development of nodule bacteria. Our experiments have shown that nodule bacteria in cultivated and irrigated soils are more active and play a great role in increasing the crop yield. The virulence of the bacteria have been determined by the laboratory, vegetative and field methods.

Our data from the vegetative and field experiments have shown that № 4, № 6 and Bachkugh strains of the nodule bacteria are the most virulent and active ones.

The plants infected by active strains had a good vigorous growth producing a considerably higher crop yield in comparison with the controls.

In conclusion we can add that, the virulent strains of nodule bacteria of the French lentils, at the same time, are active as well.